*584. ԽԱՉՔԱՐ*. եկեղեցու մեջ, նախորդի մոտ, քիվին և ճակերեսին, 4 տող.



ՔՍ ԱԾ ՈՂՈՐՄԻ ԱԼԷՔՍԻՈ-
ՍԻ ՔԱՀԱՆԱԻ ԵՒ ԾՆՈՂԱՑ
ՈՑ; ԱՄ[ԷՆ];
ԹՎԻՍ ՉԻ (1271):

***Ծանոթ.*** Երրորդ տողի ՈՑ-ն մնում է անհասկանալի:
*Երրորդ տողի սկզբում, թերևս պետք է կարդալ [ԻԻՐ]ՈՑ (խմբ.):*

*585. ԽԱՉՔԱՐ*. նույն տեղում, պատվանդանի վրա, շրջանակներին և խաչաթևերի արանքում, 12 տող.



ՅԱՆՈՒՆ ԱՅ ԵՍ՝ ԴԱՒԻԹ, Կ-
ԱՆԳՆԵՑԻ [Խ]ԱՅՉՍ ՅԱՒՐՆ ԻՄՈՑ
ՈՎ
ԱՆԻ
ՍԻ:
ՅԱ
ԴԱՒ
ԹՍ
ՅԻ
ՇԵ
ՍՁ
ԻՔ:

*586. ԽԱՉՔԱՐ*. գյուղի Ս. Գրիգոր եկեղեցու պատի մեջ, ներքին եզրում, 3 տող (ԺԴ դ.)



ԵՍ՝ ՁԱՆԱՁԻՁՍ,
ԽԱՉՍ ՇԻՆԵԼ ԷՏՈՒ Ի
ՅԻՇԱՏ[Ա]Կ ԻՆՁ ԵՒ Կ[ՆՈՋ ԻՄ]:

ՅԱԳՎԻ

*587. ԽԱՉՔԱՐ*. գյուղի մեջ, տան բակում, երկաստիճան պատվանդանի վրա, ջարդած, քիվին, 2 տող.

[ԿԱՆԳ]ՆԵՑԱՒ
ԽԱ[Չ]Ս. [ԹՎԻՆ] ՉԼՁ (1287):

***588. ԽԱՉՔԱՐ.*** գյուղ մտնող ճանապարհի եզրին: Օձունի սարահարթի վերջին կեռմանում, Դեբեդի ձորի հանդիպակաց բարձունքի վրա, կոթունի տակ Ադամի կիսանդրիով, պատվանդանի մրոտած երկրորդ աստիճանին, 6 տող.



Ի ։ՈՃԳ։ (1204) ԹՈՒԻՍ. ԵՍ ՄԵՏԱՐՍ ԿԱՆ-
ԿՆԵՑԻ ԶԽԱՉՍ ԱՒԳՆՈՒԹ[ԵԱՄ] Բ ԵՂԲ[ԱՒ]
Ր ԻՄՈՑ ԽԱՂԲԱԿԱ ։ ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ ՍԲ
ՆՇԱՆԻՍ՝ ԶՄԵԶ ԵՒ ԶԾՆՈՂՍՆ ՄԵՐ
[ՅԻՇԵ]ՍՋԻՔ Ի ՔՍ ։ ՈՐՔ ՅԻՇԷՔ՝ ՅԻՇԵԱԼ ԼԻՋ
[ԻՔ] Ի ՔՍ ։

***Ծանոթ.*** Խաչքարը երբեմն գրանցվում է Օձունի հուշարձանների թվում, սակայն այն Հագվի գյուղի սահմանում է, դարավանդից գյուղ տանող ճանապարհի եզրին:
*Պրակի նախորդ կազմողները Մետար անձնանունը կարդացել են ԱՒՏԱՐ, որը Ս. Սադումյանը ճշտել է (խմբ.):*

***589. ԽԱՉՔԱՐ.*** գյուղից 0,5կմ հյուսիս, հենած կոպտապատ մատուռի պատին, քիվին ու ճակատին, 5 տող.



ԵՍ ..............................Ք[ԱՐ]
ԱՄԵ, ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱՉՍ ՍԱ-
[ՐԳ]ԻՍԻ ՅՈԳՈՒՆ ԵՒ ԻՄ ԾՆՈՂԱՑ-
Ն։ ՈՎ ԾՈՒՆԴՐ ԱԾԵՔ՝ ՅԻՇԵ[ՑԵՔ Ի] ՔՍ ։
ԱՄԷՆ։

***Ծանոթ.*** Քիվի գրերն անմշակ են և ինչ-որ անորոշ գծապատկերներ են դիտվում: ***Քարամե*** վերականգնումը վստահություն չի ներշնչում: Կարևորը, սակայն, վերջին տողն է: Նման մի ձևակերպում այլուստ չի դիտված. ***ով ծունր ածեք*** ասելով նկատի է առնում՝ խաչքարի առաջ ով խոնարհվի, ծնկի գա, ծնրադրի, աղոթք մրմնջա:

## ՕՁՈՒՆ

Օձունը Հայաստանի առավել աչքի ընկնող պատմական բնակավայրերից է:

Բնակչության ստվարությամբ, փայտե պատշգամբով քարակերտ կրկնահարկ տներով, պարապմունքի բազմազանությամբ, կենցաղի, տարազի, հոգևոր-մշակութային բնութագրով գողտրիկ քաղաք հիշեցնող այս բնակավայրը հին պատմություն ունի: Դեռևս Վարդան Արևելցին այն կոչում է *ավան*, իսկ Ջալալյանցը՝ *«գիւղաքաղաք ի Տաշրաց աշխարհի»*: Եվ եթե անունն առնչվում է սողունի հետ, ապա դա մարդկային մտքի ծալքերում անքննին շողարձակող օձապաշտության կամ երկնային ըմբռնումների արձագանք է:

Օձունի համբավն անկասելիորեն բարձրացավ վաղ միջնադարում, երբ այստեղ կառուցվեցին քրիստոնեական ճարտարապետության որոնող միտքն առաջ մղող հոգևոր շենքեր, և երբ հրապարակ եկավ հայոց մեծերից մեկը՝ գիտնական, իմաստասեր, իրավաբան, դիվանագետ, հետևողական միաբնակ Հովհան Հայրապետը: Նրա հրաշագործությունների մասին լեգենդներ են հյուսվել, նա դասվել է սրբերի շարքը, ոգեկոչել է ժամանակակիցներին ու հետագա սերունդներին 1300 տարի շարունակ: Միջնադարի